

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՓՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ Ներկայ 1897 տարեկանի Պոչտային համար տարեկան 10 ֆր " " 1/2 " 5 " Արտասահմանի համար " 12 " " " 1/2 " 6 " Կանխիկ վճարելի	Նամակ դրամ եռայն խրկել հետեւեալ հասցեով ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ (ՊՈՒԼԿԱՐԻԱ) Редакция на вѣстникъ „Иравункъ“ ВАРНА (България).	Rédaction du journal „Iravounk“ VARNA (Bulgarie)	Խմբագրութեան ոչողեայ գրութիւնք ետ չեն դրկուիր եւ յարմար դատ. ոչաճներն միայն կը հրատարակ. ուրիւ ամբողջովին կամ մասամբ. Ծանոցմանց տողը 20 սանթիմ. երեքէն աւելի անգամներու համար 20 աւ 100 զեղ կը լինի:
---	--	--	--

ՏԱՐԵԼԻՑԸ

Ճիշդ տարի մը եղաւ այն օրէն
իվեր ուր ամբողջ աշխարհք՝ պահ
մը ապշած՝ ակնկառոյց կը դիտէր
արեւելքի մայրաքաղաքն ուսկից
արեւան տաք փրփուրներ վեր կը
ժայթքէին, ուր իսպառական
գայլը անուր մոլեգնութեամբ կը
փողոտէր քրիստոնէական անմեղ
գառնուկը, և ուր սակայն հանգ
կերպով երեւան կուգար հալած.
ուած, անիրաւուած ու շարդուած
ազգի մը հզօր առնականութիւնը.
Պատմական այդ օրը, զոր
մարդկային տարեգրութիւնը պի.
տի յիշատակէ արեւան լայն գի.
ծով, տրտմազին յիշատակներու
անհուն էջեր կը բանայ այն ամէն
Պոլսեցիի սիրտին խորքը, որ
վայրագօրէն բաժնուեցաւ գորո.
վալից սիրելիներէ, շերմիկ բարե.
կամութիւններէ:

Կծու և անշէջ մորմոք մը, հը.
րավառ ածուխի հրդեհումով, կը
գալարէ սիրտս ու հոգիս վերջի.
շերով բոլոր այն էակները, սիրելի
ու սրտակից, որոնք կեանքի ամէն
չըջաններու և ամէն պարագանե.
րու ընկեր, մասնակից ցաւերու
և խնձիղներու, յանկարծ անյայտ
եղան՝ կարծես հանգստաստ փո.
թորկի մը յորձանքին մէջ:

Ինչ եղան մեր այս սիրելի.
ները, որոնց կարօտովը ամէն օր
կերինք կը միկինք. ո՞վ լուծեց
անոնց արդար վրէժը, կամ ո՞վ
պիտի կարենայ երբեք լուծել
զայն: Վրէժի այս առերեւոյթ
անհնարութիւնն է մանաւանդ որ
կը կրծէ խեղճ հայուն սիրտը:

Անհաշուելի բան վրայ տուինք.
մինչև իսկ քիչ մնացած է որ մեր
գոյութիւնն ալ վտանգուի: Երբ
արեւան թանձրամած հեղեղներ ի.
րենց բոլոր հասուցին մինչև Եւ.
րոպայի յետին ծայրերը, երբ
հարկը հազարաւոր կոտորուող
էակներու աղէխարշ վայելնը Եւ.
րոպայի ականջն իվար վժլտաց,
ինչո՞ւ տեղի չունեցաւ համաշ.
խարհային յառնում մը՝ արգելե.
լու համար ամենէն ճիւղալային

անիրաւութիւնն որ գործուած լը.
լայ երբեք աշխարհի ստեղծումէն
ի վեր:

Այն քստմնելի օրերուն տարե.
լիցն է: Չեմ կարծիր որ տարե.
լից մը այնքան սգաւտուր ու
մեռելահոտ ըլլայ որքան այն զոր
հայը տարւոյն զանազան եղա.
նակներուն մէջ կոչուած է կատա.
րել: Բայց տարւոյն այս արիւնոտ
հանգրուաններուն առջեւ՝ ինչպէս
գազադի մը առջեւ՝ ծնրադրելու
և ողբալու ենք միայն:

Իբրեւ ապացոյց թէ այսպէս
պէտք է ընենք, թէ այսուհետեւ
մեր գերը՝ մեռելի հետեւող լաւ.
կան կենդ մը գերէն հիմնովին
տարբեր է, այս տարի հայը իր
տարեկիցը տօնեց ռուսի պայ.
թիւներով:

Ասկից ետքը մեր տօնախմբու.
թիւները այս եղանակով հարկ է
որ կատարենք. աշխարհ դաւա.
ճան ու ամբարշտ գարձեր է.
հայուն է մնացեալ անմեղ ու հա.
ւատաւորի ներկայացուցչութիւնը
կատարել: Քանի որ ներկայ ժա.
մանակիս հոսանքին մղումը այս
է, մենք ալ հետեւինք անոր.
Թերեւս մեր փրկութեան անկիւ.
նաքարը այս հոսանքին տակ պա.
հուած ըլլայ: Տեսէ՛ք, ի՞նչ աղ.
ւոր պերճախօս ապացոյց մը թէ
հայ ըսուած արարածը, — որուն
աշխարհի վրայ անգործ ապրելու
անմեղութիւն իրաւունքը այսքան
անգթօրէն անտես կառնուի, — մի.
նակ լալու պաղատելու ցած զգա.
ցումներովը չէ զինուած, հապա
ունի ճանկիր իր կակուղ մորթին
ներքեւ կծկած զորս դուրս կիր.
կարէ ի հարկին: Մարդկային
բոլոր պաղարիւն ու բանաւոր տը.
րամարանութիւնները գուցէ դա.
տապարտեն արարք մը, որ չը.
ռինդ ու պայթիւն է: Կեանքէ
ձանձրացողի մը ըսես թէ ինք.
զինքը մեռցունելէ առաջ մտածե.
լով կեանքի անուշութիւններուն
վրայ թերեւս անձնասպան չըլլար,
կը խնդայ քթիդ. ճիշդ ասոր չի՝
նմանիւ հայուն ըսել թէ՛ քեզի
կը ջարդեն կոր, բայց հոգ չէ,
մի աճապարեր. թերեւս գայ օր
մը ուր չջարդուիս, ան ատեն ա.

ղատած ես:

Այս տրամաբանութիւնը, գու.
ցէ ոմանց համար փրկաւէտ, մեղ
համար կործանարար է, որովհե.
տեւ թուրքը իր ջարդելու գոր.
ծունէութեան մէջ չափ ու սահ.
ման դնելու սովոր չէ. անիկա
միտքը դրած է մինչև վերջին
հայը մեռցնել. և, գիտնալով որ
ասանկ լուրջ բաներու մէջ թուր.
քը կատակ չըներ, եթէ հիմա.
կուրէն չզինուինք անոր դէմ, ա.
պահովապէս կը գործադրէ իր
չար նպատակը, մանաւանդ որ
քրիստոնեայ բազուկներ օժանդակ
ունի իրեն:

Հայուն համար սպասողական
երկար քաղաքականութիւն մը
կրնայ փճացուցիչ ըլլալ. հերոսա.
բար մեռնելուն և լուի միջիկ ըս.
պանուելուն միջեւ անհուն տար.
բերութիւն կայ: Պոլսոյ մէջ ար.
ձրկուած վերջին ռուսներուն հետ
թուրք և պարսկական սահմանա.
գլխին վրայ ապստամբական նո.
րանոր շարժումները տաք յոյս
մը կը դնեն մեր սրտին մէջ, մա.
նաւա՞դ այնպիսի ժամանակ մը
ուր մեր վիճակը ամենէն աւելի
յուսահատեցուցիչ կը կարծենք:

Տարեկիցը յուսադրիչ է ուրիմ
մեղ համար. նոր ու վերանորո.
գիչ ոգեւորութեամբ մը տոգո.
րուելու ենք. չըջահայեաց ու
չափազանց պահպանողական նը.
կատումներ այլ եւս իրենց համը
հոտը կորուսին մեղ համար: Ու.
թեղ գօտեպնդում մը համօրէն
հայութեան վրայ թերեւս բոլո.
րովին տարբեր ու անյուսալի
գարագուլս մը բանայ, ուսկից
բխին մեր սպասած ուժերուն
հարկ եղած կենսական բոլոր հիւ.
թերը:

Իբր եղելութիւն մը, որոյ կարե.
ւորութիւնը Ֆրանսայի ներկային
և ապագային համար անգնահա.
տելի է:

Մանաւորապէս կիսապաշտօ.
նական կամ կառավարական շըր.
ջանակներու հետ շփում՝ ունեցող
թերթեր այս առթիւ այնքան
փայլուն և իրենց երկրին համար
օգտակար գոյներով կը պատկե.
րացնեն Ֆրանքեռուս գաշնակ.
ցութիւնը որ մարդ այդ յօգուած.
ներու վայրկեանական տպաւորու.
թեան տակ կը փորձուի խորհիլ
թէ Ֆրանսա իր պատմական փա.
ռաւորագոյն օրերուն հաւասարող
զօրաւոր ու ազդեցիկ դիրքի մը
բարձրացեր է:

Սակայն խոհուն մտքերու հա.
մար այդ փորձութիւնը վաղան.
ցուկ է և չկրնար դիմանալ իրա.
կանութեան վրայ հիմնուած հա.
սուն դատողութեան, որոնք ուժին
առջեւ կը փչրուի:

Գերմանական մամուլը ընդհա.
կառակը կը ջանայ Երրեակ Դաշ.
նակցութեան շահերուն տեսակէ.
տով Եւրոպայի ընդհանուր քա.
ղաքականութեան համար իբր
անկարելոր եղելութիւն մը ներ.
կայացնել Տ. Ֆէլիքս Ֆօրի այ.
ցելութիւնն ի Բէթթերպուրկ, ինչ
որ այնքան հեւի է ճշմարտութե.
նէ:

Մտոյգը սա է որ Ֆրանսա
Ռուսիոյ հետ գաշնակցելով ազա.
տեցաւ այն մեկուսացեալ վիճա.
կէն, ուր ինկած էր Ֆրանք-և
գերման պատերազմէն ետքը և
որ զինք իրօք իջեցուցած էր երկ.
րորդական կարգի տէրութեան
աստիճանին: Եղաւ ժամանակ մը
ուր միջազգային խնդիրներու մէջ
գրեթէ ընկալեալ հին սովորու.
թեան մը հետեւելու համար մի.
այն իրեն կարծիքը կը հարցուէր:

Այժմ Ֆրանսա տարակոյս չկայ
որ այդ վիճակին մէջ չգտնուի և
իր ձայնը այնքան զօրաւոր է որ.
քան միւս մեծ տէրութեանցը,
բացի Գերմանիայէ և Ռուսիայէ՞
որոնց կը պատկանի գերագոյն
կշիռը:

Այս է ահա ինչ որ Ֆրանսա
չահեցաւ Ռուսիոյ բարեկամութե.

ՖԵԼԻՔՍ ՖՈՐԻ

Ի ԲԵԹԵՐՍՊՈՒՐԿ

Ֆրանսայի հանրապետութեան
նախագահին փոխադարձ այցե.
լութիւնը Չարին՝ Ֆրանսական
մամուլի մէջ կի ներկայացուի

նէն, անոր առջեւ բանալով իր դրամատուններուն դռները:

Սակայն շերմագոյնն այն ֆրանսական իդէոլոգիան, որոնց լրումը ֆրանսացիք կը յուսային տեսնել ֆրանքիւստուս դաշնակցութեան չնորհիւ, իրենց ազգային իտէալը, Ալգաս-Լօրէնի վերստացումը՝ կամայ կամաց չուրն ինկաւ:

Չարին Բարիդ գալէն ետքը ամէն մարդ հասկցաւ որ Ռուսիա բնաւ տրամադրութիւն չունի Գերմանիոյ յաւիտենական թշնամութիւնը դրդուել իր դէմ, Գերմանացիներուն օգնելով Ալգաս-Լօրէնը վերստին ձեռքագիլու:

Այս պատճառաւ ֆրանքիւստուս դաշնակցութիւնը նախկին ժողովրդականութիւնը չվայելեր հիմա ֆրանսայի մէջ:

Ասկէ զատ՝ ֆրանսական թերթերը ինչ ալ ըսեն, ինչ աղմուկ ալ հանեն Չարին և հանրապետութեան նախագահին միջեւ փոխանակուած այցելութեանց առթիւ, ֆրանսական ժողովրդին լուրջ մասը կարող է գնահատել իրականութիւնը և անոր իսկական նշանակութիւնը: Նա կըզգայ որ եթէ ֆրանսա ֆրանքիւստուս դաշնակցութեամբ կարողացաւ իրը մեծ տէրութիւն արժանաւոր դիրք մը ունենալ միւս տէրութեանց հանդէպ, միւս կողմէ սակայն օգնականի մը դերը միայն կը կատարէ Ռուսիոյ հանդէպ, որուն կամքին ստիպուած է հետեւիլ ամէն խնդրի մէջ: Ասոր պարզ պատճառը սա է. որ ֆրանսա Ռուսիոյ բարեկամութեան անհրաժեշտ պէտք ունի, վասն զի եթէ զայն կորսնցնէ, չկրնար ուրիշ տէրութիւն մը գտնել որ իրեն հետ դաշնակցի: Անգլիոյ հետ միայն կրնար միանալ, եթէ եգիպտական խնդիրը չկենար:

Իսկ Ռուսիա ան այնքան լաւ յարաբերութեան մէջ է Գերմանիոյ հետ և իր բարեկամութիւնը այնքան կը վնասուի Երրեակ Դաշնակցութենէն, որ ի հարկին կըրնայ անվստահութիւն ձգել ֆրանսա:

յէն, որուն տեղը բռնելիք ուրիշ ուժեր պատրաստ կան իրեն համար:

Ռուսիոյ դիրքին այս գերազանցութիւնը զայն զրկէ ինքնօրէն պետ կընէ Երրեակ Դաշնակցութեան:

Ու քանի որ Ռուսիա համախորհուրդ կը գործէ Գերմանիոյ, Երրեակ Դաշնակցութեան պետին հետ, իր ազդեցութիւնը վճռական պիտի ըլլայ ամէն խնդրի և մասնաւորապէս Արեւելեան խնդրին մէջ որ ինչպէս արդէն ըսած ենք՝ Ռուսիոյ ափին մէջն է ու պիտի մնայ:

Ահա այս կէտն է որ կը չափազանց մեղ հայերս և որուն ճշմարտութեան հարկ է որ համոզուի ամէն հայ որպէս զի գիտնայ միանգամայն թէ ո՞ր կողմէն կարելի է սպասել կենսատու շունչ մը հայկական դատին համար:

Այո՛, Հայը պարտի այսուհետեւ իր աչքերը դարձնել դէպ ի ուսական արծիւը:

ԱՆԳԼԻԱ ԵՒ ԻՍԼԱՄ ԱԾԽԱՐՀԸ

Ըօրտ Սօլզպերի փորձեց երբեմն դիւանագիտական խաղերով, աղմուկներով և թուրքիոյ ուղղեալ սպառնալիքներով հայկական խնդրին տալ լուծում մը, որ համապատասխանէր Բրիտանական շահերուն և ֆրանսէր ֆրանսական ազդեցութեան Արեւելքի մէջ: Չյաջողեցաւ և թուրքը Հայերէն առաւ վրէժն այն ծանր նախատինքներուն, զոր իրեն ուղղեցին Սօլզպերի և ուրիշ անգլիացի աշխատող անձեր իրենց չնթալից ճառերով ու շանթարձակ յայտարարութիւններով:

Անգլիա ետ ընկրկեցաւ պաղարիւն և անհոգ, զի թուրքը իրեն չէր կրնար ֆրանսէլ: Թո՛ղ Հայերն ալ իրենց պիտուն ճարը տեսնէին:

Սակայն փորձը ցոյց տուաւ որ հաշիւը ուղիղ չէր բողբոլին:

Թուրքիոյ վեհապետը միանգամայն իսլամութեան խալիֆան է, որուն եղած ամէն անարգանք իր արձագանքը պիտի գտնէր աշխարհի բոլոր բարեպաշտ միւսլիման ներուն սրտին մէջ:

Եւ ահա, ինչպէս կը հաւատեն, խալիֆայութեան կեդրոնէն զրկուած հրահանգներու վրայ՝ Աֆղանիսթանի Էմիրը, որ կրօնական պարտականութիւն համարած էր իր հայ պաշտօնեաները ճամբել խալիֆային հաճելի ըլլալու համար, սկսաւ Հնդկաստանի սահմանազնխին վրայ մեքենայութիւններ սարքել Անգլիոյ դէմ: Իր չարամիտ գործունէութեան կը վերագրուին մասամբ վերջին հնդկական խլրտումներն ու ապստամբութիւնը, որոնք արդէն այնքան դժուարութիւններ և զոհեր պատճառեցին անգլիահնդիկ բանակին և կրնան տակաւին շարունակուել ու ծանր հետեւանքներ ունենալ աւելի կամ նուազ մօտ ապագայի մը մէջ, որովհետեւ թուրքիա և Աֆղանիստան միջոցներ ունին Անգլիոյ քառսուն միլիոն իսլամ հպատակներուն մէջ անոր դէմ առելու թեան և գրգռութեան սերմեր ցանկ, որոնք կը խոստանան ծիլ ու բողբոլ արձակել:

Հայկական խնդրին մէջ իր քաղաքական քաղաքական վրայ անհոգ կը հանգչէր ցարդ Բրիտանական դիւանագիտութիւնը, հիմայ իրեն հանգիստը կուգան խանգարել իսլամութեան հաւատարիմ զաւակները: Եւ ո՞վ գիտէ դեռ ինչ բարի արդիւնքներ պիտի բաղէ Անգլիա այն զգալի անկման հետեւանքով զոր իր ազդեցութիւնը կընց, հայկական խնդրին մէջ իր կրած պարտութեան պատճառով:

Անգլիա պաշտպանել ձեւացուց ինչ որ պիտի լքանէր վճռական վայրկեանին, գրգռեց, դրդեց, առեւտրութիւնները բորբոքեց ու ետ քաշուեցաւ:

Արդարութիւնը միայն գործադ-

րուած պիտի ըլլայ, եթէ մեղ հետքիչ մըն ալ ինք ճաշակէ դառն պրոպագանդան այն ընթացքին, որ իր խորամանկութեամբ և եսապաշտ վատաստութեամբ բողբոլ վին անարժան էր Ալպիոնի զաւակներուն նման մեծ ազգի մը:

ԹԻՒՐԻՄԱՑՈՒԹԻՒՆ ՄԸ

Տիրար Զասուկեանի գերաւսանական խմբին անդամները խնդրած են մեղմէ ուղղել հայ թերթի մը տուած այն լուրը թէ Տ. Զասուկեանի Աղքատախնամ ընկերութեան ինպատար տրուած ներկայացման առաջին արարուածէն ետքը ստակ պահանջած է նոյն ընկերութենէն:

Ահա եղելութեան ստոյգ պատմութիւնը. դերասաններուն յայտարարութեան համաձայն:

Ներկայացումէն քանի մը օր առաջ խումբը պայմանագիր մը կնքել կառավարիչ ընկերութեան որ չուզեր զայն ստորագրել՝ առարկելով որ ինք պատրաստ է գրամը վճարել պահանջուած վայրկեանին: Հետեւեալ օրը Աղքատախնամի վարչներէն մին քանի մը անձերու ներկայութեանը կըսէ թէ Տ. Զասուկեանի ինչ կրնայ ընել, եթէ ներկայացումէն ետքը գրամը չվճարուի. այնտեղ ներկայ գտնուող գերաւսան մը կը պատասխանէ:

— Մենք արդէն սովորութիւն ունինք երկրորդ արարուածէն ետքը ստակը պահանջելու:

Եւ իրօք խումբը, որուն կապածի տեղի տրուեր էր, Գ. առարուածէն ետքը ստակը կը պահանջէ:

Ուստի սխալ է թէ Տ. Զասուկեանի պահանջած ըլլայ գրամը արարուածէն ետքը:

ԲՈՒՆՈՒԹԵԱՆ ԶՈՅԵՐ

(ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՔՍՈՐԵԱԼԻ ՅԵՏԱՍԿԱՐԱՆԻՑ)

Գ.

(Շար. Ասի. Թիւքէն եւ վերջ)

«Այժմ էլ բռնեցին՝ այս անգամ աւելի շուտ և հայրենիքից աւելի հեռու, ալիպէս որ նրա քամին էլ երեսին ու շրթունքներին չը դիպան...»

— Բայց ինչպէս էք թող տալիս որ ձեզ խորհրդանքն, արհամարհանքով հարցրի ես:

— Հը, դարմանում է՞ք, զըզվում է՞ք. առաջ ես էլ ձեզ պէս էի մտածում, առաջին անգամ կատաղած դիմաքիցի, մի երկուսին էլ գետին փռեցի, սակայն սասը հողով վրաս ե-

կան, ձեռք ու ոտքս կապեցին, մի լաւ ջարդեցին, արիւն լուայ արին, կիսամիտ հիւանդանոց տարան եւ մեծ խնամքով բժշկեցին որ ապրիմ, զգամ որ պատախանդութեան զգացմունքը մեռել է իմ մէջ, ընդունակ դառնամ ամեն մի ստոր վարմունքի դիմանալ լոկ գոյութիւնս պահպանելու համար. եւ գրեթէ հասան իրանց նպատակին. այսօր ծնծը ինձ համար նոյն նշանակութիւնը ունի ինչ որ մի բաժակ թունդ սպիրտ:

Ես մոռացել էի իմ վիշտը, չաւրած նայում էի այդ մարդու վրա եւ խղճահարկում: Սա չէր նմանում իմ տեսած ուրիշ թափառաշրջիկներին, սրա ամեն մի խօսքից արտաշնչվում էր բուռն աստիճանի դէպի բռնութիւնը, խիստ զգլանք դէպի իր ներկայ վիճակը: Ես համեմատարար ինձ աւելի երջանիկ էի զգում, գոնէ իմ պատիւը տեղն էր եւ պատիժս ոչ այնքան սղակալի...

Այդ մտածմունքների մէջ էի, երբ

զրան մէջ բացւած պատուհանից լսվեց մի բարակ ձայն: Մեր ընկերներից մէկը մօտեցաւ դռանը եւ կոչեց. — Դո՛ւ ես, Մահմուդ, ինչ ես ուզում. մի քիչ յետոյ երեսը դարձրեց դէպի ինձ եւ ասեց.

— Պարոն, ձեզ է ուզում: Չարմացած մօտեցայ դռանը, որի միւս կողմում կանգնած էր մի լեզգի, իր սովորական արխալուզով, յիսուներից աւել տարիքով. ճիշդ Կովկասի լեռնցի: Մահմուդը ժպտաց, աչքերը փայլատակեցին եւ նա ինձ հարցրեց բաւական կոկիկ Ռուսերէնով.

— Դու Կովկասցի ես, գալիս ես իմ հայրենիքից, մեր սիրուն լեռներից, հովիտուն ջրերից եւ սուեւրախտ անտառներից: Նա կանգ առաւ. արցունքի մարգարտափայլ կաթիլները ժայթքեցին նրա ուժասպառ աչքերից, վարվաղեցին, խառնուեցին ալիսաւան մօրուքի սպիտա մազերի հետ եւ անհետացան:

Ես չափազանց յուզուեցի, որչա՞փ դժբախտ մարդիկ. անյոյս արարածներ կան աշխարհիս երեսին. իմ աչքերն էլ թրջուեցին, ուզում էի խօսիլ, բայց Մահմուդը կրկին շարունակեց.

— Չէ, բաւական է. մի ժամից յետոյ ձեզ զբօսնելու կը հանեն, այն ժամանակ երկար կը խօսինք: Այս ասելով՝ Մահմուդը հեռացաւ:

Մի հինգ վայրկեանի չափ աչքերովս հետեւեցի Մահմուդին:

Ես տեղաւորվեցի սենեակի մի անկիւնում եւ սկսեցի մտածել ծերունի Կովկասցու վրայ, անհամբեր սպասում էի զբօսանքի ժամին, որ նորից տեսնեմ Մահմուդին եւ հեռաքրքրութեանս բաւականութիւն տամ: Հասաւ ցանկալի րոպէն, մեղ զուրս հանեցին, ես աչքերովս Մահմուդին էի փնտռում, վերջապէս եկաւ ծերունի լեռնցին, բռնեց երկու ձեռքերս եւ ասաց.

— Ներեցէք, այն ժամանակ չը կարու-

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

Աղքատախնամ Ընկերութեան Կողմէ քաղաքացիական հասցի քաղաքիկ նպաստը 42 օրուան

1897 Յունիս 18էն մինչեւ Յունիս 31

Հանգանակութիւն Ֆր. Տիար խաչիկ Տաճարեանի նախաձեռնութեամբ 174 Տիար Կարապետ Յովսէփեանի նի նախաձեռնութեամբ 1151

Գումար 1325

Բաշխումն Ֆր.

1078 1/2 քիւօ հացի փոխան

Պ. Լ. Մուրադեանի 132

6516 քիւօ հացի փոխան

Պ. Ա. Պետրոսեանի 1143

Չանազան աղքատ ընտանեաց տրուած 26

Տնտրակներու գնման և զանազան 4

Գումար 1325

Ի դիմաց վարչական ժողովոյ Աղքատախնամ Ընկ.

Ատենադպիր Ատենապետ Գ. ՍԻՄԻՆԵԱՆ Գ. ՍԻՄՈՆԵԱՆ

Գանձապետ

ՕՆՆԻԿ ՅԱՆՈՒՅԵԱՆ

1897 Օգոստոս 12/24

Վաճառ

ԾԱՆՈԹ. — Քառասուն երկու օրուան մէջ բաշխուած է 7594 1/2 քիւօ հաց 750 և 850 կրամիոց. հացերու փոխարէն վճարած 7321 լէֆ արծաթ. քաշխումը եղած է 144 ընտանիքներու 535 անձերէ բաղկացեալ:

Աղքատախնամ Ընկերութիւնս կը փութայ յայտարարել որ առեւտրական հրապարակին վրայ վերջերս երկու պատուաւոր ազգայնոց մէջ տեղի ունեցած անհաճոյ դէպքի մը կարգադրութեանն առթիւ, մէկ կողմը որոշած է ընկերութեանս նաւերը երկու հարիւր ֆրանք ոսկեգում,

զացայ ինձ գտել, հենց որ ձեզ տեսայ, մաքուր թոյլ Դադարտան իմ պաշտելի հայրենիքը, մտաբերեցի իմ թոգունի պէս թուղ ձին ու անլրէպ հրացանս, յիշեցի իմ նաղըլի ու չըքնաղ կիներ, որի փափուկ երեսը գուցէ հիմա խամրել է աղի արցունքի յորդավազ կաթիլներէ, մտաբերեցի իմ հրեշտականման երկու փոքրիկ զաւակներս, որոնք հիմա մեծացել են եւ իրանց հօր կարօտն են քաշում ու փնտռում: Երկին արցունքի կաթիլները երեւցին ծերուկ լեռնցու աչքերում, բայց այս անգամ նա իրան չըպնէ:

— Բայց, Մանուկ, դու ինչպէս ընկար այս կողմերը, հարցրի ես:

— Իմ պատմութիւնը շատ կարճ է. սիրելի հայրենակից — Մի օր ոտս զինուորները ընկան մեր գիւղի ամենապարտաւոր կնոջ ետեւից, մեր կըսէին որ կատաղեցին եւ զինուորներին կոտորեցին: Ես գիւղի աէրն էի, կա-

մեր պատուոյ փոխարինութիւն միւս կողմին:

Արդ, Ընկերութիւնս ստացած ըստով այդ գումարը, իր խորին շնորհակալեքը կը յայտնէ յիշեալ երկու ազգայնոց, որոնք աշակերտութիւն մը եւս յստատեան իրենց տառապալու եղբարց արտասուքը սրբելու գերագոյն հաճոյքը վայելի:

Ի դիմաց Աղքատախնամ Ընկ. Վաճառ

Ատենադպիր Ատենապետ Գ. ՍԻՄՈՆԵԱՆ Գ. ՍԻՄՈՆԵԱՆ

15/27 օգոստ. 1897

Ի քաղաքիս

ԱՐԾՐՈՒՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Արծրունեան վարժարանի Բ. Տարեշրջանն ու դասախօսութիւնները կը սկսին սեպտեմբեր 1ին նոր վարձուած շէնքի մը մէջ, հայոց թաղ, Սագալը 2էշմէ, թիւ 197:

Վարժարանը ընդունուած է Պուկար Գիմնազիաներու ծրագիրը աննշան բարեփոխութեամբ մը՝ ներմուծելով անոր մէջ Ազգ. լեզու, Ազգ. պատմութիւն և գրականութիւն:

Վարժարանը ոչ թէ պիտի գիւրացնէ կուսակցական գաղափարներու մուտքը, այլ պիտի պատրաստէ մինչեւ երրորդ դասարանները:

Ֆրանսերէն խօսակցութիւնը գիւրացնելու համար, պաշտօնի կոչուած են երկու վարժուհի, որոնց գլխավոր զբաղմունքն է մէկն ալ այդ լեզուով խօսակցութիւնը պիտի ըլլայ ուսանողներու հետ: Մանկական սրահին մէջ գործադրելի է մանկապարտէզի դրութիւն:

Եթէ դաշնակի համար բաւական թիւով խնդրանք ըլլայ, կարելի է կարգադրութիւն մը ընել: Վճարումներու համար ընդուն-

աւարտութիւնը ինձ աքսորեց, որովհետեւ ես չուզեցի ձերբակալել պատուաւոր զաւակներ. երեք տարի ես ապրեցի այս քաղաքում, հենց որ ամառը գալիս էր ես խնդրեալ էի՝ հայրենիքիս կարօտը քաշում էր ինձ: սիրտս ճմլում էր, մի ամառ էլ չը կարողացայ դիմանալ, փախայ, ոտս կանխեց ընկան իմ ետեւից, ուզեցին ընել, ես դիմադրեցի, նրանցից մէկին վիրաւորեցի, սակայն ես էլ ծուղակն ընկայ, ինձ ենթարկեցին 7 տարւայ բանտարկութեան, ահա չորս տարի է որ այս բանտում եմ, էլ ազատվելու յոյս չունիմ: Մեռնելու եմ այս սեղ, հետո իմ սիրուն հայրենիքից: Միակ միջոցաւարութիւնս այն է, որ երբեմն քիչ նման մէկ մէկ գալիս են, եւ ես գոնէ այդ կերպով աւելում եմ իմ կարօտը:

«Դժբախտաբար դու շատ շուտ կերթաս, հենց վաղը, ես իմացայ բանտապետի օգնականից, նա ինձ շատ է

նուտ է տար թնշտի սկզբունք. երեք պայմանաժամով՝ սեպտեմբերի, յունիսի և մարտի սկիզբները հատուցանելի:

Արձանագրութիւնները կը սկսին վաղուրէն, ժամ 9—12, վայրէջքնին նախագ շէնքին մէջ և կը տեւեն մինչեւ օգոստոս 25:

Տնտրութիւն

ԹԵՔՐԱՐ ԻՅԹԻՐԱ

Ախրէն Սթանպուլում աթըլմըշ օլան պօնպալար կէօնա վարնաւա իմալ օլունուպ, Սթանպուլում նազ օլունումալ տէյիւ թիւրք հիւրիւմէթի Սօֆիայա մուրաճաթիւնէ Պուկարարըն սըգգաթը նազարըն վարնա իւմէնի մուհաճիւրէի իւզէրինէ տալէթ իթմիշ տիր: Եթէ տէն պէրու վարնաւա կիւնէ հէր պիր վարօրտան գուշ ուշուրմամազ տէրէճէտէ Սթանպուլում թիւրքէր թահարընաթ վէ հօզլամալար իճրա իթմէրտէ իթէն տինամիթէ վէ պօնպալա տայիր պիր շէյ պուլամաւմըշ օլտըզարըն հալտէ՝ եւ վիմէնէ նաֆազարըն տիւլինմէքտէ օլան վարնա մուհաճիւրէի սէֆալէթիւնի պու եօլտա պիր գաթ տահաւարընմալա սէպէպիլէթ վէրմէք վիճաւանսըլըզը եալընըզ թիւրք հիւրիւմէթի եալապիլիր խոլ:

Պուկարար պէշ սէնէ էվլէլ տալիս թիւրք հիւրիւմէթի Պուկարարըն իւմէնիւր իւզէրինտէն հիւնի թէվէճուհընը գալընմալա նիյէթ ի իլէ պունտան տահա մուզիր ազվիյաթտա պուլընմըշ օլտըզընտան նաշի, Ա. Սթանպուլի հիւրիւմէթի Բուսնուզ, վաճառ վէ Սիւլիստըտէ միւթէմէքլին միլլէթտալարմըզը սըգըշտըրմըշ վէ պազըլարը թէվլըթ վէ էվլէրինի թահարընի իթմէքլէ պէրապէր պիր շէյ էլէ կէշիւմէմիշ վէ նիւհայէթ թիւրք հիւրիւմէթիւն իսթալարընա գարընմըշ օլտը-

սիրում: Նոյնպէս նրանից իմացայ որ դու Խոփկասի հայ ես... քիչ ուզարկելու ես Գ... քաղաքը, բաւական երկար ճամբա ունես անցնելու, կարծեմ դրամ չունես: հը. ես քիչ դրամ էլ, չայ ու չաքար էլ կը տամ:

— Ոչ մի բանի պէտք չունեմ, Մանուկ, ասացի ես:

— Չէ, անկարելի է, դու ինձ վիրաւորում ես: չէ որ մենք հայրենակիցներ ենք, միեւնոյն հողի ու ջրի գաւակը. եւ հիմա դու իմ հիւրն ես...:

Եւ ներս կանչեցին... մի ժամից յայտնեցին որ վաղը քնալու եմ Գ... Գիշերը քունս չը տարաւ. ես մտածում էի Մանուկի եւ ողբայի վրայ: Վերջապէս լոյսը բացվեց, ինձ դուրս կանչեցին:

Ես մտեցայ նախկին սպային եւ ամուր սեղմեցի նրա ձեռքը:

— Բարի ճանապարհ, տաք երիտաւոր, ասեց սպան, զոյշ մնացէք...

զընա գոնաթ հատըլ իթմիշ տիր:

Պուկարար տալի Պապը Ալի աշըլ ազվիյաթտա պուլընմալա իսթտէ, Ա. Սթանպուլի հիւրիւմէթի քէնտի սալիֆինտէն ազիլ վէ միւտէպալիր օլմազլէ թիւրք իսթալարընա ալաթ օլմալաճաղը կիպի, Պուկարարտա սաքլին միլլէթտալարմըզ Պուկարարըն քէնտիլէրինէ հայաթպալաշ պիր իլթիւմէնա պուլմուշ օլտըզընտան, Պուկարար միլլէթի նէճիւպէնէ վէ հիւրիւմէթի տալլէթքնարանէսինէ իլանիհայէ մին. նէթտար օլուպ, քէմալը սատա, գաթլէ Պուկարարանըն թէրազըլաթընա չալըշմազ վէ գալանին ու նիւզամաթընա իթաթ իթմէք քէնտիլէրինէ մէպտէ իթթիսալ իթմիշէր տիր:

ԹՅՊԱՏ ՃԱՆԻԼԵՐԻ

Թոգաւ գրկընընտան տօլայը իտամա մահքիւմ օլան թիւրքէրին գաթլ օլընմալարը իշին աթիվը շահանէ սուտուր իթմիշ օլուպ անլէր մուէպպէտէն գալէպէնտ օլմալարըն մըշ:

Պիլ էվլէլտէն խրիսթիյան գաթլ իտէն միւլմանլարա չէտիտ ճէղա վէրիմէզ օլտըզընը եալմըշ ըտըզ. շիմտիլը ճէղալարը թաթիֆ օլընտը իսթտէ, ազ պիր միւտէթ սօնրա մէքըլըր ճանիլէրին մէմէքլէթէրինէ կիթմիշ օլտըզլարընըն խապէրին տալի ալմալարըն:

Թէլէկրոֆ հալմաթիտընա կէօրէ, Թոգաւ մէմէլէսինտէն տօլայը եէնիտէն թիւրքէրտէն 44 բիշի մահքիւմ իտիլիշ տիր:

Թէ չէ շատ երկար կը մնաք այս կողմերում:

Մենք դուրս եկանք բակ, Մահմուդը դեռ չէր երեւում, ուղում էի նրան էլ հրաժեշտի ողջոյն տալ:

Վերջապէս նա վաղելով մօտեցաւ ինձ տեց մի կապոյ, գրկեց եւ ճակատս համբուրելով ասեց.

— Գուցէ ես մեռնեմ, դու երիտաւոր ես եւ կը վերադառնաս Կովկաս, հենց որ կը նկատես Դադարտան լեռներին ճերմակ կատարները, կասես «Մահմուդը ձեզ բարեւում է. ձեզ չէ մոռցել...» նա կը մեռնի ձեր կարօտը քաշելով: Մահմուդը հազիւ իր խօսքը վերջացրել էր, երբ բանտի դռները բացվեցին սովորական շառաւումով. մենք դուրս եկանք, դռները կրկին փակվեցին եւ այնտեղ մնացին Կովկասի սպառ լեռնային եւ նախկին չքեղ ու վաղուրտ սպան. եւ ո՞վ գիտէ մինչեւ երբ...:

ՎԱՐԴՈ

ՊՈՒ ԿԻՆՔԻ
ԹԵՆԵԿՐԱՑԼԱՐ

(Ամսն Պաշտանիք)

Աթինա, 14 Օգոստ.

Թիւրքերին թնայախառն չըգ-
մասը իշխն ինկիլթերանն վու-
գու պուլան թէքլիֆի տիկեր տէվ-
լէթլերտէն ընտտ օլընտը: Եունա-
նիսթանն մալիյէսինէ գօնթօլ
ուսուլինին մէվգըր իճրաէ գօնը-
մասը հազգընտա տէվլէթլեր իտ-
տաա իթմէքտէ տիրէր:

Մոնթէվիտէօ (Ամերիկա),
14 Օգոստ.

Ուրուկուանն ճիւղհուրիյէթ
րէյիսի ընկուլթեր իլէ էօլտիւրիւ-
տի:

Սթանպուլ, 14 Օգոստ.

Խարիճիյէ նաղըը պիւթինէ էլ-
չիլէրէ միւրաճաթլէ միւսալէհէ
մէսէլէսինին աճէլէթէն թէսվիյէ
իտիլմէսինի թալէպ իթմիլ տիր:
Պանքը Օսմանի վէ Եունանիսթան
պէյնինտէ պիր իսթիգրազ ագտ
իթմէք իշին միւլաքքէրէ օլըն-
մագտա տըր:

Տիւն ազալմ իքի էրմէնի (պի-
րիսի Բուսիալը) ֆրանսըզ վէ Բուս
սէֆարէթհանէլէրինէ պիրէր մէք-
թուպ վէրտիքտէն սօնրա իթալիա
սէֆարէթհանէսինէ տախի վէրէ-
ճէքլէրի սըրատա տէրտէստ օլըն-
տըլար: Մէքքիւր մէքթուպլար ա-
խիւրէն էլչիլէրէ վէրիլմիլ օլան պէ-
յաննամէլէրին մէալը եանըլ ան-
լաչըմըլ օլտըլընը կէօսթէրիլէր
իմիլ:

Պէյօլլընտա տէրտէստ օլընան
իքի էրմէնիլէր սօն վուգուաթը
թէրթիպ իտէնլէրին սէրկէրտէլէ-
րի օլտըլը Պապը զապթիյէճէ
զանն օլընմագտա տըր:

ԵՆԻՆԱՆԻՍԹԱՆ ՎԵ ԹՈՒՐԻԲԱ

Պու սալը կիւնիւ թէճէմիւ օ-
լընան էլչիլէր մէճիլսինտէ՝ թիւր-
քիայա էօտէնմէսի լաղըմ կէլէն
թաղմինաթը հարպիյէի, թահթը
թէմինէ ալմագ իշին Եունանիս-
թանն նէ մըգտար վարիտաթը
օլտուղընա տայիր Աթինատան
իզահաթ իսթէնիլմէսի գարար-
լաչտըրըմըլ տըր:

Ֆրանսա, Բուսիա վէ ին-
կիլթէրանն Աթինա էլչիլէրի՝ ի-
քի միլիոնտան զիյատէ թաղմի-
նաթը հարպիյէ էօտէմէք Եու-
նանիսթան իշին միւլաքինսիզ օլ-
տըլընա տայիր հիւքիւմէթի մէն-
սուպէլէրինէ ըմբօթ վէրմիլչիլ
վէ մէքքիւր տէվլէթլերտէն պիրի-
սի ըմբօթթըն մաալընը մէպտէն
զապուլ իթմիլ օլտըլը, Աթինա-
տան քէշիտէ օլընան պիր թէլէկ-
րաֆ պիլտիրմիլ տիր:

—Կիրիտ մէպուսանը առանն
իշէրլէրինտէ ագտը մէճիլս իտուպ
էրնիքէ էքէրիա նամ միլի ֆըր-
գայա պիր ընիս թային իթմիլ
վէ լաղըմ կէլէն մուամէլէի սիյա-
սիյէնին իճրասը իշին մուվագ-
գաթ պիր հիւքիւմէթ տախի
թային իթմէք գարարընտա պու-
լընմըլ օլտըլը թանտա օգուն-
մըլ տըր:

ՍԹԱՆՊՈԼ

Սօն վուգուաթտան պէրու հէր
սընըֆ էհալիտէ ֆէվգէլատէ պիր
գօրգու հիւքմ իթմէքտէ օլտըլըն-
տան, ուֆագ պիր վէլվէլէ սէպէ-
պի իլէ չօգ տէֆա գարընըգըր-
լար չըգմագտա վէ տիւքիւնլար
գարանուպ, գաչան գաչանա օլ-
մագտա տըր:

Պու տէֆա լօլիպէր վէ զապ-
թիյէլէր էհալիյէ սուրէթի միլա-
յիմանէտէ տալրանմագտա վէ սօ-
քաճը ալալընա մէնսուպիյէթ կէօս-
թէրէնլէրի թուլթուպ գարամագ-
տա տըրլար:

—Էվլէլէր կիւն Պէյօլլընտա
պիր ֆրանսըզ խանէսինտէն բօ-
լիսլէր իւլ էրմէնի թուլթագ
իսթէտիլէր: պուլարտան պիրի-
սի ընկուլթեր իլէ քէնտի քէնտի-
սինի էօլտիւրտիւ վէ տիկէր իքի-
սի տէրտէսթ օլընտըլար:

Թան

ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻԵ

Սթանպուլտըն Սթանպուլտան
ալտըլը հապատիսաթա կէօրէ,
Լօնտրա թիւրք էլչիլսի հիւքիւմէ-
թինէ պիր ըմբօթ իսլալըպ, իս-
լամլարը իսթիլալա թէլչիլք իթ-
մէք խուսուսընտա թիւրքիաթուլթ-
մուլ օլտըլը թարիգէ տէվամ ի-
տէր իսէ՝ քէնտիսի իշին բէք վա-
խիմ նէթիճէլէր հուսուլա կէլէճէ-
կինէ տայիր Լօրտ Սօլգպէրինին
իսթարընը պիլտիրմիլ տիր:

Սատրաղամ Մօրնիկ Բօսք կա-
զէթանն Սթանպուլ մուսպիրի իլէ
կէօրիւմէսինտէ տէմիլ տիր: «Պու
սօն վուգուաթ պիր գաչ քիշինին
չարգընըլը սէմէրէսի օլուպ, անը
ուսուլա եախօտ էհալինին պիր
գըսմընա աթֆ իթմէք սօղրու
տէյիլ տիր»:

Բրէնա Ֆէրտինանտ հաղթթ-
լէրի վէ Աստրիա պէյնինտէ հու-
սուլա կէլմիլ օլան սուգըլըլըն
տէրէճէսինի կէօսթէրմիլ օլմագ
իշին թալալըլ աթիտէքի մալիւ-
մաթլարը վէրմիլ տիր:

«Բրէնա Ֆէրտինանտ Սթանպուլ-
տա իքէն Բուսիա սէֆարէթհա-
նէսինէ կիտուպ քարք տը վիզի-
քինի քէնտի էլի իլէ պըրագմըլ

վէ Աստրիա սէֆարէթհանէսինէ
պըրագմասը լաղըմ կէլէն քար-
թընը րուս սէֆարէթինին գալա-
սը իլէ Եօլլամըլ իտի: պուլա
մուգապիլ Աստրիա էլչիլսի տա-
խի քէնտի քարթմընը բօսթա վա-
սիթասը իլէ Բրէնա Եօլլամըլ
տըր: էլչիլին պու հարէքթի
էվլէլէրինտէն տահա զիյատէ նէ-
զաքէթէ նագիսէ կէթիլէն պիր
հալ տըր:

Քէզա Բրէնա հաղթթլէրի շու-
սըրա Բէթրապուրկա կիթմէմէք
իշին Չարըն պաչգա հիւքմտար-
լարըն զիյարէթինի գապուլ իթ-
միլ օլմասընտան տօլալը Եօրուլմըլ
օլտըլընը սէպէպ կէօսթէրէք
ազիմէթինի թէլէսիլ իտէճէկինի
Բէթրապուրկ խանէտանը իմբէրա-
թօրիյէ պիլտիրմիլ իտի: Չար
տախի Բրէնա ճէվապէն «էն էվ-
վէլ իմբէրաթօր Ֆրանք Եօլէֆ
իլէ պէյնինիլտէ օլան մէսէլէի հալլ
իթաթէքէն սօնրա Բէթրապուրկա
կէլմէլիսինիլ» տէմիլ տիր:»

Սուլթանըն ճիւլուսը մինասիպէ-
թի իլէ Սթանպուլտա տօնանմա ի-
տիլմէսի պու սէնէ տախի պա ի-
րատէ մէնն օլընմըլ տըր:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Վաղը, տօն Ս. Աստուածածնի,
տեղույս Ս. Եկեղեցիին մէջ կա-
տարուելիք հանգիսաւոր պատարա-
գին առնը հոգեհանգստեան պաշ-
տօն տեղի պիտի ունենայ Կ. Պու-
սոյ, Խապիւղի, Սամաթիյի և
ուրիշ տեղիւրու արիւնալի կոտորա-
ծին նահատակներուն տարելիցին
ի յիշատակ:

ՋԱՆԻՐԷ ԲԻԱՅԱՍԸ

Վառնա 16 Օգոստոս

ԵՍԿԻ ՄԱՀՍՈՒԼ

Պուղոտայ

Վակօն, Եօգ

Արապա, լիպրա 57-61, հէքթօլ-
13-14 ֆրանք

Արքա

40-42 լիպրա, հէքթօլթ. 5,80-6
Նաթօլէոն 20,60 ֆռ. հիսապը իլէ
կիւնտէ հալընըլ 5-6 արապա
պուղտայ վէ 5-6 արապա արքա
էնտիկի սէպէպլէ օլան մուամէլէ
էհէմիլիյէթսիլ տիր: Բիացա՝
կէվէք:

Եէնի մահսուլտան կիւնտէ 50-60
արապա պուղտայ վէ 5-6 արապա
արքա ինմէքտէ տիր: Պուլտայ
լիպրասը՝ 47տէն 56, ֆիյաթ՝
7-11 ֆրանք. արքա լիպրասը
38 տէն 41, ֆիյաթ 5,60-6:

Կիւնտէ 7-8 արապա ֆասուլիա
կէլմէքտէ վէ մալա կէօրէ 100
օգգասը 17տէն 23 ֆրանքա գա-
տար սաթլըմագտա տըր:

Ա.Զ.Դ

Օր. Տեղեկութիւն, տեսչութիւն աղջկանց
ֆրանսական ցորեկօթիկ վարժարանին
որ բացուած է ի վառնա, փողոց Եուն-
կուլիազա, թիւ 82, պատու ունի
ժանուցանել այն ընտանիքներուն ու-
րոնք պիտի հաճին զինք պատուել ի-
րենց վստահութեամբ, թէ վարժարա-
նին բացուած տեղի պիտի ունենայ
Սեպտ. 1/13 ին: Պուլկարիւրէն, Ռու-
սիէն եւ Գերմանիէն լեզուներէն
զատ, ուրիշ ամեն լեզու կաւանդուն
ֆրանսերէնով: Երաժշտութիւն ալ կը
դաստիարակուի: 1-4



ԿՈՒՋԷՔ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՆԱԼ

Դիմեցէք Փ. Պուսոյ «Վիսալ Պօրիս»
հրատարակի վրայ Օթէլ Պուլկարիայի
ներքեւ թիւ 199 սաթիլի խանութը,
ուր պիտի գտնէք՝ ճերմկած մաղերը,
մօրուքը ու պիտի սեւցնելու համար
ԿՐԻՆ ներկը:

Ներկար փորձերէ վերջը յաջողեցայ
պատրաստել սոյն ներկը, որ սարա-
լուծուելով Առողջապահական պատ-
ժողովոյ անօրէնութեան կողմէն հաս-
տատուած է թէ ո եւ է վնասակար
նիւթ չպարունակեր եւ որուն առաջին
անգամ գործածութիւնը պիտի ապա-
ցուցանէ թէ իւր տեսակին մէջ մինչեւ
հիմայ երեւցածներէն ամենէն գերա-
զանցն է:

6-10 ԿԱՐԱՊԵՏ ԶԱՔԱՐԵԱՆ

Ա.Զ.Դ

Փորձառու եւ երկարատեւ աղջկային
վարժարանաց մէջ պաշտօնավարած,
եւ Ուսումնական Խորհրդոյ կողմէն
վկայեալ՝ զատարակ եւ երաժիշտ ու-
սուցիչ մը պատրաստ է պաշտօն ստանա-
նել չափաւոր ամսականով մը:

Փափաքողք պարտին դիմել ուղղակի
իրեն հասցէին:

Ֆիլիպէ Քուլուլու հանւոյ. Պաղ-
տասար Տարխանեան:

Ա.Զ.Դ

1897 Սեպտեմբեր 1էն սկսեալ վար-
ձու պիտի տրուին Հաճի Բանաքօ Գա-
րապիթաքի գինետունը եւ պարտէզը,
որ կը գտնուին Վառնայի Երգ թաղը,
թիւ 5, ծովկերեայ պարտէզին դի-
մացը:

Վարձել փափաքողքները մանրամաս-
նութեանց համար կը հրաւիրուին դի-
մել կալուածատիրոջ, գրաւոր կամ
բերանացի, առ

ՀԱՅԻ ԲԱՆԱԿՈ ԳԱՐԱՊԱԹԱՔ
Վառնա, 25 Յուլիս 1897 3-6

Ա.Զ.Դ

«ԻՐԱՆՈՒՆՔ»-ի վարչութիւնը
յանձն կառնու պատրաստել Հա-
յիլէն, Պուլկարիւրէն, Ֆրանսերէն
և Բունարէն լեզուներով ընկա-
լագրեր, հասցէներ, նամակագրու-
ներ, մահազգրեր, յայտարարու-
թիւններ, հարսանեաց և այլ հրա-
ւիրագրեր, այցաքարտեր են, են:

Գնելը չափաւոր

Փափաքողք պարտին դիմել խմ-
բագրութեան հասցէին: